№ 205 Նոյեմբերի 4 (16) 1881 Նոյեմբերի 4 (16) № 205

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրագրացիր գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարվում են
խրատանքիր տառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գերմանիա։ Ֆրանսիա։ Աւստրօ-Ունգարիա։ Նամակ Թիւրքիայից։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Թիւրքիայից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Հոկտեմբերի 31

Կարդալով ձեր պատուական «Մշակ» լրագրի 203 համարի մէջ տպած պ. Դ. Նիկողոսեանի նամակը, որի մէջ նկարագրած է Թշուառ դրութիւնը Կ. Պոլսի որբանոցի և աղետալի վիճակը որբիկներին, նա մանաւանդ անտանելի չարչարանքը խնամակալ մայրապետ Սրբուհի Գալֆայեանի տան և հինգ տարվայ ընթացքում, ոչ սակաւ արտասունք թափվեցան իմ աչքերից, նրա համար, որ ես անձեռնհաս եմ բարւոքելու դառնագոյն վիճակը ողորմելի որբիկներուն։ Միայն կարող եմ նուիրել նրանց իմ ծնողից նշանակած իմ ծննդեան օրվայ ծախսի համար երեք ռուբլի և խոստանալով իւրաքանչիւր տարի 31 հոկտեմբերի առաքել յիշեալ որբանոցի սանների համար երեք ռուբլի որով գոնէ փոքր ինչ նպաստ կը լինի իմ ազգի անտէրունջ որբերուն։

Ուստի առաջարկելով երեք ռուբլի, խնդրեմ ձեզ՝ ողորմած տէր, բարեհաճել առաքել այս չնչին դրամը առաքինի մայրապետ Սրբուհի Գալֆայեանին։

Աշակերտուհի Ս. Գայանեան օրիորդաց ուսումնարանի

Շուշանիկ Առուանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մինչև այժմ մեր խմբագրութեան մէջ պ. Քիւրքճեանի ֆոտոգրաֆիական ժողովածուի համար հաւաքված բոլոր փողերը արդէն յանձնեցինք պ. Քիւրքճեանին։ Իսկ այսօր կրկին ունենք մի 20 ռուբլ պարոնին յանձնելու, որ ըստացանք Կարակուրտից պ. բժիշկ Միրիմանեանցից հետեւեալ նամակով։ «Որովհետև այժմ հիմնվել է Թիֆլիսի մէջ բարեգործական ընկերութիւնը, որի նպատակն է ի միջի այլոց օգնել և հիւանդներին, այդ պատճառով խնդրեմ այն 25 ռուբլ գումարից, որ մնում է խմբագրութեան մէջ, որ ուղարկել էի անցեալ տարի յօգուտ բժշկական օգնութեան կոմիտեի, որ դժբաղդաբար չը կայացաւ, 5 ռուբլ տաք վերոյիշեալ ընկերութեանը, անդամական վճարը 1882 թի համար, իսկ 20 ռուբլ յանձնէք պ. Քիւրքճեանին ուղարկելու ինձ Անիի աւերակների ժողովածուն։»

—

Շատ տեղերից համակրական նամակներ ենք ստանում մեր առաջնորդող յօդուածի առիթով Էջմիածնի «Արարատ» ամսագրի դէմ ուղղված։ Ի միջի այլոց մեր բարեկամներից մէկը մեզ գրում է։ «Վերջապէս պէտք է վերջ դնել մեր եկեղեցականների անկարգութիւններին։ Իմ խորին համակրութիւնն ընդունեցէք ձեր առաջնորդող յօդուածի համար։ Շատ լաւ էք մտածել դատաստանի կանչել այն ամսագիրը, որի դէվիզն է ամենատոր մատնութիւնը։»

—

Մի ուսանող խնդրում է մեզ յայտնել հետեւեալը։ «Արդէն վերջացրել եմ Դիկէնս անգլիական մատենագրի «Малютка Тимъ» մանկական գրքոյկի թարգմանութիւնը, ուստի խնդրեմ յայտնէք պ. պ. թարգմանիչներին, որպէս զի ձեռնամուխ չը լինեն երկրորդ անգամ թարգմանելու նոյն հեղինակութիւնը։»

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են, որ հոկտեմբերի 23-ին սկսեց այդտեղ հեղեղանման անձրև գալ և ապա 24-ին և 25-ին նոյն ամսի ձիւն եկաւ։ Դեռ ծառերը կանաչ էին և ձիւնը նստեց նրանց վրա և շատ վնաս տուեց այգիներին, ջարդելով ծառերի ճիւղերը։ Այդ վնասի պատճառով, ինչպէս կարծում է թղթակիցը, միւս տարի մրգեղէնի բերքը շատ սակաւ կը լինի։ Կաղզուանի բնակիչների մեծ մասը պարապում են այգեգործութեամբ, իսկ վաճառականութեամբ պարապում են միայն եկողները և ոչ թէ բնիկ հայերը։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են, որ պ. Ա. Անանովի յիշատակ իր հանգուցեալ որդու նուիրեց Քութայիսի ծխական հայոց դպրոցին 500 ռուբլ։ Մեր թղթակիցը մեզ գրում է որ Քութայիսում շատ ցուրտ է անում այժմ, շրջակայ սարերի վրա ձիւն է գալիս, իսկ քաղաքում հինգ օր շարունակ անձրև է գալիս։ Մթերքների գները բարձրացան։

—

Ֆրանսիական օպէրէտային խումբը այսօր, չորեքշաբթի օր, ներկայացումն կը տայ Արծրունու թատրոնում։ Թատրոնը թէև լի չէ լինում այդ ներկայացումներին, բայց մեծ մասամբ գալիս է թատրոն Թիֆլիսի այլ և այլ ազգութիւններին պատկանող ամենանշանաւոր հասարակութիւնը։ Ֆրանսիական խմբի ներկայացումները մեծ զուարճութիւն են պատճառում հանդիսականներին։

—

ԶԻԲՐԱՑԵԼԻՑ մեզ գրում են։ «Հատրուտ գիւղը իր շրջակայ տաս հատ փոքրիկ գիւղերով, 500 ծխից բաղկացած, մի շատ յարմար կենտրոն է ուսումնարանի համար։ Կլիման ամեն կողմից գեղեցիկ է այստեղ և առողջարար։ Բայց 500 տունից բաղկացած հայ ազգաբնակութենից միայն 50 աշակերտ կայ մեր դպրոցում, մնացած մանուկները պարապ թափառում են գիւղերի փողոցներում։ Աղքատութիւնը և տգիտութիւնը պատճառ են անտարբերութեան դէպի ուսումը։ Իսկ աղքատութեան պատճառը հողաբաժնի պակասութիւնն է և մարդկանց պարապութիւնը։»

—

Մեզ խնդրում են տպել հետեւեալը։ «Այն մեծապատիւ պարոններին և արժանապատիւ հայրերին, որոնց մօտ գտնվում է «Նելսըն դոկտոր Ամերիկացու խորհրդածութիւններ» գրքոյս, խնդրում եմ աշխատեն վաճառել և դրամները հասցնեն ինձ հետեւեալ հասցէով։ Тифлисъ, священнику Григору Мандакуни, на Авлабарской Метехской улицѣ.»

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 22 հոկտեմբերի 81

Ազգային կենսական հարցեր կան հրապարակի վրայ, ուստի կը կարծէինք թէ այս միջոցիս ամենից կարևորութիւն մը պիտի չը տրուէր Հայաստանի մեծ նահանգի մը մէջէն վարժարանի մը աներևոյթ ըլլալուն, վարժարան մը աւելի, վարժարան մը պակաս, ինչ փոյթ։ երկու երեք օր և ամեն ինչ կը մոռցուի։ Բայց քառասուն և եօթը օրեր անցան յորմէհետէ տան և հինգ երիտասարդներ ու պատանիներ որոշեցին փակել Վանայ վարժապետանոցը, և քառասուն և եօթը օրէ յուզումը փոխանակ հանդարտելու, օրէցօր կաճի ժողովրդի մէջ։ Զեն դադրիր լրագիրք այս խնդրոյն վրայ խօսելէ, այս խնդրոյն վրայ շարունակ կը խօսուի ժողովուրդի մէջ։ Կը զգանք թէ վարժապետանոցը իւր կրթական ծրագրովը հայ ազգին ապագային համար նշանակութիւն մը ունէր, թէ այդ վարժապետանոցը միութեան կապ մ'էր Վասպուրականի և մեր մէջ, զայն փակելով Վանի ու Կ. Պոլսոյ մէջ ցրտութիւնը կը տիրէ։—Զենք ուզեր հոս խօսել այն փաստերուն վրայ զորս առաջ բերաւ «Միացեալ ընկերութեանց» վարչութիւնը արդարացնելու համար վարժապետանոցի փակումը, վասն զի անօրէն ժողովոյ ատենապետը ինքն կը յայտարարէր թէ անոնք շատ երկրորդական կէտեր էին, այլ դրամական անձկութիւնը միայն պատճառ էր այդ առաջարկը ընելու։ Սակայն զարմանալին այն է որ տընօրէն ժողովը ինքն իր տեղեկագրին մէջ կըսէր՝ դրամական տեսակէտով չէ որ վարժապետանոցի փակումը կուզէ, այլ սկզբունքի տեսակէտով, անմահ սկզբունքներու տեսակետով։ Ի՞նչ ըսես, ինչ պատասխանես այս տեսակ մարդկանց որ մեծ ընկերութեան մը գլուխ կը գտնուին և կենսական հարցի մը վրայ չեն համարձակիր անկեղծ պատասխան տալ։—Եթէ արդի վարչութիւնը դրամ չէր կարող գտնել, կային ընկերութեան մէջ բաւական կարևոր անձեր, որք եթէ վարչութեան գլուխը անցնէին, կարող պիտի ըլլային դրամ գտնել, ուստի արդի վարչութիւնը զգուշացաւ այս կէտին վրայ խօսելէ։ Իսկ երբ իր բարոյական փաստերն որչափ անհիմն ըլլալն տեսնուեցաւ, այն ատեն դրամական խնդիրը մէջ բերաւ։—Գաղտնի մատ մը կայ որ չարունակ կաշխատի որպէս զի հայերը Վանայ մէջ գործ չը տեսնեն. ոն է այդ գաղտնի մատը, չենք տեսներ, բայց գործերը կերևին։ Այդ գաղտնի մատը ոչինչ կարող է ընել երբ Վասպուրականի մէջ գործել ուզողները արի և հեռատես մարդեր ըլլան, իսկ երբ տկար, վախկոտ անձեր դէմը կելլեն, անմիջապէս թշնամիք իրենց չար դիտաւորութիւններն ի գործ կը դնեն։ Քիչ դարձուածքներ եղան որ Արարատեանը Վասպուրականի մէջ չը գործէ. քաղաքական զրպարտութիւններ, կրօնական ամբաստանութիւնք, ամեն տեսակ խոչնդոտներ տեղի ունեցան, բայց ոչինչ կրցան ընել, իսկ այսօր ամեն բան մեր թշնամեաց յաջողած է, Վասպուրականի տեսչութիւնը կը ջնջուի, վարժապետանոցը կը փակուի, գիւղերը շարունակ այցելու մը չը կայ, Վասպուրականի գիւղերը ապագային մէջ կրթելու համար ոչինչ պատրաստութիւն չը կայ. Վասպուրականի մէջ նոր գիւղային վարժարան մը բանալու ոչինչ հոգ ընող կայ, ամեն ինչ լքեալ, կիսակատար։—Ի զուր մարդ կուզէ ինքզինքը զսպել, ի զուր կը ջանային տխրել ու լռել, անկարելի կըլլայ այս երբ կը տեսնես որ աւերակներու կոյտ մը կայ առջեւդ. հինգ տարի բազմաթիւ երիտասարդներ իրենց կենաց ամենէն աղուոր օրերը կը նուիրեն ապագայ մեծ գործի մը հիմունքը ձգելու, և կը յաջողին. Վասպուրական իրենց ուշադրութեան առարկայ կըլլայ, և հինգ տարիներէ վերջ կը տեսնեն որ Նորեկ ձեռքեր բոլոր իրենց գործերը կը քանդեն կաւրեն, և թվ ալ այսուհետև կը համարձակի որոշ յատակագծով ապագայի համար աշխատել։ Ինչ տարօրինակ սիրտ ու միտք ունեցող ժողովուրդ ենք. Վասպուրականը պատժելու կելլենք, իբր թէ թիւրքերը արդէն բաւականէն աւելի չեն պատժեր Վանայ մեր տարաբաղդ եղբայրները։ Հրդեհը, սովը, քրդական ասպատակութիւնները արդէն վերջին աստիճան խեղճութեան հասցուցին Վասպուրականը. տեղական իշխանութիւնը, որ գիտէ թէ ինչ նշանակութիւն ունի հայոց համար Վան, ոչինչ չը խնայէր զնա ընկճելու, և երբ վանցիները մեր վրայ յոյս դրած, կամ լաւ ևս մեր աջակցութեան ապաւինած կը տոկան տառապանաց, յանկարծ մենք ալ զիրենք պատժելու պատգամ կուտանք։—Վանէն նշանաւոր անձ մը հետեւեալ տողերը կը գրէր «և գիտէք ինչու Վանցին այս նահատակութեանց կը տոկայ, որպէս զի դուք հայ անունը պահէք, որպէս զի ազգը յոյս ունենայ։»

Վարժապետանոցի փակումը Վանայ մէջ մեծ վհատութիւն առաջ բերած է, ինչպէս կը վկայեն Վանէն եկած բոլոր թղթակցութիւնները, և այստեղի վանեցիները վերջին աստիճան տխրած են։—Թէրճէմանը Էֆքեար կը հրատարակէ, մահուան յատուկ սև շրջանակի մէջ, իր Հայաստանի սուրհանդակին հետեւեալ տողերը «Հայաստանի ամենէն բարձրագոյն վարժարանը, Թիւրքիոյ հայ երիտասարդութեան ամենէն գեղեցիկ արդեանց մին, Արարատեան յաւերժայիշատակ ընկերութեան դաստակերտն և համայն ղգայուն հայոց սրտի և մտքի, ըղձից ու փափագաց առարկաներէն մեծագոյնը, վերջապէս հայոց անդրանիկ վարժապետանոցն որ կը վերաբերէր «Միացեալ ընկերութեանց» հայոց, սեպտմ. 15-ին փակուեցաւ, աշակերտներն թափառական կը պտտին, իբր 1500 օսմ. ոսկին, որ նորա վրայ ծախսված է բացման օրէն և յայժմ, բոլորովին կորաւ հանդերձ որքան վաստակօք որ ընդ նմին գործեցան...»

Վանէն եկած նամակներն որք կը նկարագրեն փակման այդ ժամերը, տխուր տպաւորութիւն մը կընեն հայ սրտի վրայ։ Նամակի մը մէջ կը կարդանք. «Վարժապետանոցը անտէր մեռելի տուն դարձեր էր, և ուսանողները չփոթած, այլայլած անխնամ որբերու. ամբոխի մէջ աճուրդի հանած էին վարժապետանոցի կայքերը, գոյքերը, Վանայ կեանքը և ընկերութեան պատիւը։

Ուրիշ նամակի մը մէջ կը կարդանք. «Սեպտեմ. 16-ին անպատիւ կերպով աշակերտները դուրս հանուեցան, գրեթէ վռնտուեցան, առանց գոնէ ամոնց մի երկու խօսք ընելու. առանց գոնէ խրատ տալու աշակերտաց որ դպրոցը գոցուելէ վերջը իրենց ժամերը պարապ չանցնին։—Սեպտ. 20 և 27-ին վարժապետանոցի գոյքերը աճուրդի հանեցին անարգարար։ Տեղացի վարժապետները, որ վարժապետանոցի առջի օրերը տեսած էին, աշակերտները որ չորս տարի առաջ ուրախութեամբ այդ յարկը մտած և այդ դասեղաններու վրայ կը մեծնային, ամենքն ալ տխուր էին և կուլային, չենք կարող նկարագրել այդ տեսարանը»։—

Դարձեալ ուրիշ նամակի մը մէջ կը կարդանք գիշերօթիկ աշակերտաց մասին (այս գիշերօթիկները Արարատեան ընկերութիւնը Վանայ շրջակայ գիւղերէն ժողոված էր, գալ տարի դասատու պիտի ըլլային, և մէկն ալ Տիգրանակերտէն բերել տուած էր Արարատեանը). «Անդրէաս, Շահէն, և Խիրոյեան իրենց տեղերը վերադարձած են։ Այս վերջինը առաւօտը դեռ ոչինչ կերած, առանց հետը հաց առնելու լալով մնկնած է սուրհանդակին հետ մինչև Ալիւր անօթի քալելով (Այգեստանէն Ալիւր 6 ժամ է) —իսկ Տիգրանը հիւանդացած է, բոլորովին անխնամ թողուած. ինքը Սարգսանէն բժիշկ մը բերել խնդրած էր, բայց այս վերջինը մերժողական պատասխան տուած էր. ծախք ընենք քեզի բժիշկ մ'ալ բերենք։— Սենեկի մը մէջ դրած են ուր ոչ լոյս կայ, ոչ մաքուր օդ, այն ապականած սենեկին մէջ, զոր մինտերի մը վրայ ձգած են, լաւ է որ կապրի։»—

Ահա այսպէս տարիներով աշխատելու է, սասկ արդիւնքներ ձեռք բերելու համար։ Մխիթարական կէտ մը կայ։ Երբ առաջին անգամ վարժապետանոցը Արարատեան ընկերութիւնը բանալ կուզէր Վանայ մէջ, ազգային իշխանութեան կողմէ ընդդիմադրութիւն կար, և ոչ իսկ կուզէին ծանուցում ընել եկեղեցին, իսկ այսօր բոլորովին փոխուած, ժողովուրդը կը յուզի, կուզէ որչափ որ կրնայ դրամական օգնութիւն ընել որ վարժապետանոցը կանգուն

Լսում ենք որ Թիֆլիսի վրաց թատրոնական խումբը կրկին անցնելու է Արծրունու թատրոն, այդտեղ իր ներկայացումները շարունակելու համար։

—

Երևանում հրատարակվող «Պսակ» լրագրում, հոկտեմբերի 23-ի համարի մէջ, կարդում ենք հետևեալ հեռագիրը Էջմիածնից ստացած և ստորագրված Ստեփան Գէորգեանի անունով։ «Երէկ երեկոյեան ժամը եօթին, եղբօր Բարդուղիմէոս վարդապետի վրա տաս հոգի թուանդչի յարձակվելով, ձեռները կապել են և բարբարոս կերպով թակելով, տարան, ասում են, Խորվիրապ։» Այդ հրէշաւոր անցքի մասին, մենք էլ ստացանք մի քանի թղթակցութիւններ, որ կաշխատենք հրատարակել «Մշակի» հետևեալ համարներից մինում։

—

Ասում են որ Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեանի պատժելու պատճառն այն էր, որ այդ վարդապետը խիստ բողոքներ է գրել Էջմիածնում գործվող զեղծումների դէմ և աներկիւղ կերպով իր ստորագրութեամբ ներկայացրել է այդ բողոքները Վեհափառին, Սինոդին և պրոկուրորին։ Այդ բողոքներից մինը տպված է «Պսակի» մէջ, նոյնպէս ուղարկված է մեր խմբագրութեանը, մեր լրագրի էջերում տպագրվելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Իշխան Բիսմարկ այն գործիչներից չէ, որոնց յուսահատեցնում է առաջին պատահած անաջողութիւնը։ Նա գիտէ օգտվել գործերի ամենանյարմար դրութենից և հաստատ պահպանում է մի անգամ իր մըշակած պրոգրամը, ինչպէս և լինեն շրջապատող քաղաքական պայմանները։ Ընտրութիւնները, որոնց պատճառով կառավարութիւնը այդչափ մեծ ծախսեր արաւ, պետական կանցլերի ներքին քաղաքականութեան համար տխուր հետևանքներ ունեցան։ Ցանկացած կառավարչական մեծամասնութեան տեղ դարձեալ ընտրվեցան նախկին ինքնուրոյն կուսակցութիւնները այն զանազանութեամբ միայն, որ իշխանին ընդդիմադրող տարրերը աւելի էլ զօրեղացան։ Բերլինը ընտրեց բացառապէս առաջադէմներին և գլխաւորապէս նրանց, որոնց իշխան Բիսմարկ իր անձնական թշնամիներ է համարում։ Այնու ամենայնիւ այդ անաջողութիւնը չարգելեց իշխանին ընթանալ իր ընտրած ճանապարհով, թէպէտ զգուշութեամբ համբերութեան և հաստատամտութեան օգնութեամբ։ Գերմանիայի պետական կանցլերը դեռ ևս յոյս ունի համոզել հասարակութեանը, որ իր տնտեսական նախագիծները շատ օգտաւէտ են։ Ուսանողական մի ընկերութեան մատուցած ուղերձին իշխան Բիսմարկ պատասխանում է, որ միանգամից ոչինչ չէ կարելի ձեռք բերել և որ պետական հարցերի վերաբերութեամբ պէտք է դիտենալ համբերութեամբ նպատակին ձգտել։ Ամենազօր կանցլերի այդ յայտնութիւնը շատ նշանաւոր է. նա ցոյց է տալիս, որ իշխանը յարգում է ընտրութիւնների ժամանակ յայտնած երկրի կամքը, միայն թէ իր իրաւունք է համարում ազդել հասարակութեան վրա և աշխատել, որ վերջինը համակրէ իր տնտեսական նախագիծներին։

Բայխստագը երևի կը գումարվի նոյեմբերի 21-ին։ Նրա քննութեանը կառաջարկվեն կայսերական բիւդժեան 1882 թուականի համար։ Բացի այդ բայխստագը իր առաջին նիստերի ժամանակ պէտք է քննէ այն ծախսերը, որոնք հարկաւոր են եղել Համբուրգ քաղաքը կայսերական մաքսային դաշնակցութեան հետ միացնելու համար։

Լայպցիգի ուսանողական ընկերութեան ուղերձին իշխան Բիսմարկ հետևեալ պատասխանը տուեց։ „Շնորհակալ եմ ձեր հեռագրի համար։ Բերլինի ընտրութիւնները ինձ չը զարմացրին և չը յուսահատեցրին։ Ծանր հիւանդութեան բժշկութիւնը ժամանակ և համբերութիւն է պահանջում։ Ուրախ եմ, որ գերմանական ուսանողները ինձ հետ միասին հաստատ հաւատում են ապագային։“

Բայխստագի անդամների ընտրութիւնների մասին դեռ ևս հաստատ զեղափար չէ կարելի կազմել, մինչև յայտնի չեն լինի 100 կրկնաքուէարկութիւնների հետևանքները։ Եթէ այդ կրկնաքուէարկութիւնները կառավարութեան համար մինչև անգամ աջող լինեն, այնու ամենայնիւ պահպանողական երկու խմբերը կենտրօնի հետ հազիւ թէ կարողանան նշանաւոր մեծամասնութիւն կազմել։ Հիմիկուց կառավարութիւնը սկսել է շողոքորթել կենտրօնական կուսակցութեանը, որ այժմ առաջուանից աւելի ուժեղ է։

ՖՐԱՆՍԻԱ

—

Պատգամաւորների ժողովի անդամների թիւը համարվում է 557, բայց իսկապէս ներկայումս միայն 540 անդամներ կան, որովհետև նրանցից մի քանիսը ընտրված են մի անգամից մի քանի նահանգներում։ Ժամանակաւոր նախագահի ընտրութեան չէին մասնակցում 176 պատգամաւորներ։ „Հավասի“ ընկերութեան տեղեկութեան համեմատ նոր մինիստրութեան մէջ Լէօն Սէ կը ստանայ Ֆինանսների, իսկ Ֆրէյսինէ պատերազմական մինիստրի պաշտօնը, Ժիւլ Ֆերրի դարձեալ ժողովրդական լուսաւորութեան մինիստր կը լինի։ Բրիսօն ստիպված կը լինի բաւականանալ պատգամաւորների ժողովի նախագահի պաշտօնով։ Ասում են, որ Գամբետտա նոր մինիստրութիւնը կազմելուց յետոյ ժամանակաւորապէս կը դադարեցնէ պատգամաւորների ժողովի պարապմունքները, որպէս զի ժամանակ տայ իր կառավարութեանը գործերի դրութեան հետ լաւ ծանօթանալու համար։ Գամբետտա բոլորովին չի նախագահի պատգամաւորների ժողովի նիստերին, որպէս զի ցոյց տայ, թէ ինքը պատրաստվում է մինիստրութիւն կազմակերպել։ Մանաժողովը, որին յանձնված էր Գամբետտայի ընտրութեան վերաքննութիւնը այդ ընտրութիւնը կատարելապէս կանոնաւոր յայտնեց։

Հոկտեմբերի 31-ի նիստին պատգամաւորների ժողովը շարունակում էր պատգամաւորների ընտրութեան վերաքննութիւնը։ Գամբետտայի ընտրութիւնը հաստատվեցաւ, որովհետև նրա դէմ բողոքը ստորագրված չէր։ Այնուհետև նախագահը յայտնեց, որ ցօնի Բէվելիօն մտադիր է խօսել Գամբետտայի ընտրութեան մասին։ Ցիշեալ պատգամաւորը ասեց մօտաւորապէս հետևեալը. „Իմ պարտականութիւնն է յայտնել կարծիքս, բայց խոստանում եմ չափաւոր լինել։ Պաշտօնական կանդիդատուրան նշանաւոր դեր էր կատարում Գամբետտայի ընտրութեան ժամանակ։ Ընտրողական ժողովի ժամանակ Թաղապետը նրա կողքին էր կանգնած։ Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ պաշտօնական ճնշումն։ Քուէարկութեան ժամանակ պոլիցիականները հեռացրին հասարակութեանը դահլիճից և ձայների հաշուելը փակված սենեակի մէջ կատարվեցաւ։ Բայց ես կը թողնեմ այդ փաստերը և կը խօսեմ գլխաւորապէս նրանց բարոյական նշանակութեան մասին։ Այժմեան ընտրութիւնների ժամանակ դէմ առ դէմ կանգնեցան հանրապետական երկու տեսակ քաղաքականութիւններ։ Միապետական ծագումն ունեցող հանրապետական քաղաքականութիւն, որ յարձակողական բնաւորութիւն ունէր՝ դա իմ հակառակորդի քաղաքականութիւնն էր, և ազատ քաղաքականութիւն։ Մենք միայն վերջին քաղաքականութիւնն ենք ճանաչում, որ մտցրած է Բելվիլի նախագծի մէջ 1869 թուականին և որից հրաժարվեցաւ նրա հեղինակը։ Միայն այդ նախագծին հաւատալով, մենք ընդունեցինք Գամբետտայի կանդիդատուրան։ Մեր ժողովների ժամանակ ոչ ոք այդ խէն լաւ պիտի ըլլայ, ուրիշները քաղաքական տեսակէտներ ունին։ Եթէ քաղաքական հարկ մը իսկ ըլլայ որ պատրիարքը հրաժարի, միթէ պէտք չէ՞ որ ջանանք ատկէց ալ օգուտ մը քաղել և ցոյց տալ որ պատրիարքը Դրան բռնաբարութեամբը կը հրաժարի։ Նէրսէս պատրիարքը Եւրոպական համբաւ մը ստացաւ, և այնպէս ճանչցուած է որ իւր ազգին անձնուէր անձ մ՚է։ Այս այսպէս գիտեն մեր ժողովուրդի ստուար մեծամասնութիւնը և օտար ազգերն, արդ երբ այսպիսի անձ մը մեր ձեռքովը կելլենք կը տապալենք, բնական է որ օտարականաց համարումը շատ պակսի մեզմէ, և այդ համարմանը պէտք ունենք։

Հոկտեմբերի 16-ին ազգային ժողովոյ նիստը շատ փոթորկալից եղաւ, խառնաշփոթութիւն մեծ էր, և թողած տպաւորութիւնը տխուր եղաւ։ Պ. Փափազեան հարցում մը ուղղած էր ս. պատրիարքին, որով բացատրութիւն կը պահանջէր այն տարբերութեանց մասին որ կը տեսնուէին պատրիարքարանէն հաղորդուած Հայաստանի վիճակագրութեան մասին։—Պ. Փափազեան այս երևցած տարբերութիւնը անպատճառ կը գտնէր ազգային դատին և միանդամայն կը պահանջէր որ պատրիարքը իր վերջին երկամեայ գործոց համարը տայ։— Ներփակեալ կը գտնէք այս հարցման Օրինակը «Մասիսէն» առնուած։

Պատրիարք սրբազանը շատ յուզուած էր, և բարկութեամբ պատասխաններ տուաւ։—Վիճակագրութեան մասին յայտարարեց թէ գաւառներու վրայ ըրած է վիճակագրութիւնը, և թէ վերջը կառավարութիւնը գաւառներու նոր բաժանումներ ըրած ըլլալով (և այս բանիս վրայ չէր կրնար երկար խօսել) այս թուոց տարբերութիւնը անկէ գոյացած է։—Պատրիարքը կըրնար նաև ըսել թէ վեհաժողովին ժամանակ ուրիշ պարագայներ կային և ուրիշ յոյսեր, ու չէր կարծուիր. որ նորանոր վիճակագրութեանց պէտք պիտի ըլլայ։ Իսկ համարաւութեան մասին գալով, պատրիարքը այնպէս մը կարծեց, որ իրեն վրայ անվստահութիւն ըլլալուն վրայ է, որ այս հարցումը կընեն։ «Ինչ տուիք ինձ, որ ինչ կը պահանջէք. այո, ես մահնեցի ազգը, ես կերայ ազգին ստակները, ես փակեցի վարժապետանոցը, ես ծախեցի ժողովուրդը, ամեն ոճիր ես գործեցի, ես այսպէս պատրիարք եմ, եթէ կուզէք կը մնամ, եթէ չէք ուզեր կը հրաժարիմ։—Ժողովրդեան մէջ յուզման ցոյցեր, բարկութեան նշաններ, պ. Փափազեան կը յայտարարէ թէ ինքն թշնամական ոգով չէ որ հարցում կընէ, բայց պատրիարքն ալ այս կերպով պէտք չէ պատասխանէ։ Փափազեան կուզէ մեկնիլ, պատրիարքը կը կանչէ ետեէն, որ եկուր նըստէ, եթէ վատ չես, եկուր պատասխաններս մտիկ ըրէ։ Փափազեան կուգայ կը նստի քիչ մը և կերթայ. երեսփոխանք ոմանք կը սկսին կամաց կամաց իրարու զարնել ձեռքի տակէ, դպրոցի աղոց պէս. ժողովքը ալեկոծեալ, „վստահութիւն կը յայտնէ պատրիարքին, պատրիարքը կը մեկնի, ժողովքը կը ցրուի, վատ տպաւորութիւն մը կը մնայ։

Պատրիարք սրբազանին թերութիւնը այն է որ ինքզինքը չը կրնար զսպել շատ անգամ։ Ժողովքի մը գլուխ եղողը, ժողովքի մը կառավարողը իր անձին տէրը ըլլալու է, և շատ համբերութիւն ունենալու է։ Պատրիարքը չը կրնար ազգային ժողովքէն անցնիլ, չը կրնար զայն արհամարհել, որովհետև իր իշխանութիւնը այդ ժողովքէն առած է, և ամենածանր պարագայներու մէջ «ժողովքին կամքը, որ ազգին կամքն է, այս է,» ըսելով գործ տեսած է։ ուստի այդ ժողովքի հետ վարուելու է։ Ամեն ժողովքի մէջ բարեկամ ալ, թշնամի ալ կը գտնուի։ Բայց միւս կողմէ պատրիարքն ալ սովորական վիճակի մէջ պէտք չէ նկատենք և պէտք է զգանք թէ որքան տարիներ են կաշխատի, ամեն կողմէ խոչդոտների, դեսպանաց կողմէ անտարբերութեան դէմ. դրամ չը կայ, պատրիարքարանի սընտուկը խեղճ, և առանց մարդու, առանց դրամի, առաց մեծ աջակիցներու աւելի ինչ կարող էր ընել, հիւանդ, տկար անձ մը։

Հայկակ

բանի դէմ չէր խօսում։ Ճշմարիտ է մեզ անարժան կերպով բամբասում էին։ Ֆրանսիայի վիճակը իր խելքի մէջ կարգադրող մարդը մեր մասին ասեց իր ծառաներին. „ազատեցէք ինձ այդ մարդիկներից։“ Այդ պատգամաւորի խօսակցութեան ժամանակ ժողովի մէջ աղմուկ կար, որ աւելի էլ սաստկացաւ, երբ Բէվիլիօն արտասանեց ծառայ բառը, որ Գամբետտայի կուսակիցներին էր վերաբերում։ Այնուհետև ժողովը ձայների ահագին մեծամասնութեամբ հաստատեց Գամբետտայի պատգամաւորական իրաւունքները։ Պատգամաւորների ժողովի վերջին նիստերը վատ տպաւորութիւն են գործել հանրապետութեան նախագահի վրա։ Թէպէտ Գրեվի համաձայն էր մինիստրութեան կազմելը յանձնել Գամբետտային, բայց կամենում էր, որ պարլամենտական սովորութիւնները զեղծված չը լինէին։ Գրեվի նկատել է, որ այդ ամենը դեռ կարելի էր համբերել, եթէ պարլամենտական ամբիոնի մօտ չը լինէին կանգնեցրած կարգապահները, որոնք ընդդիմադրականներին թոյլ չէին տալիս ամբիոն բարձրանալ։

Ի նկատի առնելով Գամբետտայի մինիստրութեան կազմելը Ֆրանսիական դեսպանները Բերլինի, Վիէննայի և Պետերբուրգի մէջ վճռել են համաձայնութեամբ գործել։ Կոմս Սեն-Վալէ, Բերլինի Ֆրանսիական դեսպանը յայտնել է Գրեվիին, որ նա կը շարունակէ վարել իր պաշտօնը միայն այն դէպքում, եթէ Շալմել-Լակուր, Պոլ Բեր և Ֆլոկէ մինիստրի պաշտօն չեն ունենայ։ Նոյնը յայտնել է և Վիէննայի Ֆրանսիական դեսպանը։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Վաղ ժամանակներում, երբ պետութիւնների և ժողովրդների վիճակները անմիջապէս վճռվում էին պետական իշխանութեան ներկայացուցիչների ձեռքով, վերջինների անձնական տեսակցութիւնները պատմական առաջնակարգ դեր էին խաղում։ Անձնական տեսակցութեան ժամանակ միապետները կարողանում էին միմեանց յայտնել այն, ինչ որ չէին վստահանում հաւատալ միջնորդներին. իրանց սեփական ինիցիատիւով և անձնական ներգործութեան ազդեցութեան շնորհիւ, նրանք, աւելի կամ պակաս հիմքերի վրա, կապում էին յարաբերութիւններ, առաջնորդվելով անձնական և դինաստիական շահերով։ Շատ բնական է, որ ժողովրդները այն ժամանակներում միապետների անձնական յարաբերութիւններին մեծ նշանակութիւն էին տալիս, և նոյնպիսի երկիւղով և յոյսով էին սպասում նրանց տեսակցութեան հետևանքներին, ինչպիսի յոյսով, աստուածաշնչի աւանդութեամբ, փղշտացիք և հրէաները սպասում էին Դաւթի և Գողիաթի մէջ եղած մենամարտի հետևանքին։

Ժամանակները փոխվեցան. ժողովրդների վիճակների վճռելու մէջ սկսեցին մասնակցել իրանք ժողովրդները, թէ ներկայացուցչութեան ձևով և թէ քաղաքական կուսակցութիւնների, քաղաքական մամուլի ձևով։ Չը նայելով այն բանի վրա, որ ժողովրդները զարգանալով՝ պետութիւնների մէջ եղած յարաբերութիւնների բնաւորութիւնը սաստիկ փոխվեցաւ, բայց արտաքին յարաբերութիւնների ժամանակ պետութիւնների մէջ առաջին ձևերից շատերը պահպանվեցան և թէպէտ ներկայ ժամանակում այդ ձևերը բոլորովին այլ նշանակութիւն ստացան, բայց հասարակութեան մեծամասնութիւնը, ի բաց չառնելով և իսկական քաղաքագէտներին, նայում է նրանց վրա հին տեսակէտով։ Դրանց ապացոյց կարող են համարվել այն առասպելական պատումները և անհաւատալի լուրերը, որոնք վերջին ամիսներում տարածվեցան եւրոպական մամուլի և հասարակութեան մէջ միապետների կայացած և կայանալի տեսակցութիւնների առիթով։

Արդէն մի շաբաթից աւելի է, որ բոլոր եւրոպական մամուլը, մանաւանդ աւստրիական մամուլը աշխատում է հասկանալ Հոհենբերգ թագաւորի Ֆրանց-Յոսէփ կայսրի հետ տեսակցութեան նշանակութիւնը։ Լրագիրները միմեանց հակառակ կարծիքներ են յայտնում այդ տեսակցութեան առիթով, բայց բոլորը համաձայնվում են, որ այդ անցքը մեծ նշանակութիւն ունի։ Վիէննայի ընդդիմադրական մամուլը այդ տեսակցութիւնը համարում է որպէս գրաւական աւստրօ-գերմանական դաշնակցութեան ամրութեան և հաստատութեան, գերմանական ազատամիտ մամուլը Վիէննայի տեսակցութիւնը համարում է այն բանի նշան, որ Բալկանեան գործերի վերաբերութեամբ Եւրոպայի կառավարութիւնների մէջ կատարեալ համաձայնութիւն է կայացել, և այլ այլն։ Բոլոր այդ ենթադրութիւնների մէջ Ֆրանց-Յոսէփը և Հոհենբերգը ներկայանում են ոչ որպէս ժամանակակից սահմանադրական միապետեր, այլ հնադարեան պետեր, որոնք ազատ կերպով կարգադրութիւններ են անում և կառավարում են իրանց պետութիւնները. կը կամենան,—միմեանց պատերազմ կը յայտնեն. կը կամենան,—դաշն կը կապեն մի որ և է հարևան պետութեան դէմ. կը կամենայ մէկը,—կընծայի միւսին երկուսերեքը իր նահանգներից, և այլն։

Քաղաքագէտ հարկաւոր չէ լինել հասկանալու համար, որ ներկայումս պետական հարցերը միապետների տեսակցութեան միջոցով չեն վճռվում։ Աւստրիայի և Իտալիայի մէջ եղած յարաբերութիւնները որոշվեցան վերջին քսան և հինգ տարում կատարված անցքերով,—անցքերով, որոնք մի կողմից իտալական թագաւորութիւնը ստեղծեցին, իսկ միւս կողմից—ստիպեցին Աւստրիային հիւսիսային Իտալիան ձեռք բերելու յոյսից բոլորովին հրաժարվել և բոլորովին ուրիշ ուղղութիւն տուեցին Իտալիայի արտաքին քաղաքականութեանը։ Վիէննայի տեսակցութիւնը Ֆրանսիայի դէմ ուղղված ցոյցի նշանակութիւն միայն կարող է ունենալ, որի օգնութեամբ Իտալիան համակրութիւն է ցոյց տալիս Աւստրիային, իր նախկին թշնամուն, և ոչ թէ Ֆրանսիային, իր նախկին ազատողին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 20 հոկտեմբերի։

Մարդս սխալական է կըսեն։ Այսօր Թիֆլիսի «Մեղու» լրագրին 198-դ թիւը կարդացի, ուր պ. Շամշադրամ անուն մէկ անձ պ. Դիւլօրիէի անցքէն օգուտ քաղելով, կը բարեհաճի միւս անգամ յարձակիլ «Մշակի» և նորա աշխատակից պ. Գ. Նիկողոսեանի վրայ։

Մեր Կ. Պոլսոյ մէջ իմաստակ պարոններ քիչ ունէինք, մէկն ալ մեզ Թիֆլիզէն ընծայուեցաւ, որու պրօգը երկու ամիսը անգամ մը «Մասիս պատուական» լրագրի մէջ կարդալու բարեբաղդութիւնը ունինք, ընկերակցութեամբ Քէչեանի և Գրաւէր Ատոմի։ Չը գիտեմ թէ այդ պարոնը իր կարտ դը վիզիտներուն վրայ ալ դրած է «Թղթակից Մասիս լրագրի» նախանձելի տիտղոսը, բայց կրնամք վստահութեամբ ըսել թէ մեծ կոչում չի ցոյց տար այդ պաշտօնին և պարապ ճանձրութիւն է որ կառնէ երկու ամիսը անգամ մը, քանի որ իւր թղթակցութիւն անուանով քանի մը հարիւր մղոն հեռին յուղարկածը ուրիշ բան չէ բայց եթէ, «Մշակէն» և «Մեղուէն» քաղուած և այն ալ հինցած լուրերուն ժողոված։ Այդ չէ թղթակցի մը պաշտօնը և այդ վրացական կօնտրբանտի անունը կրող պարոնը, որ մի համալսարանական գրագէտ է կըսեն, փոխանակ անելի և դատարկ լուրեր տալու մեզի, լաւ կընէր քիչ մը նկարագրէր և ճանչցուներ ռուսահայերը տաճկահայոց։

Կ. Պոլսոյ մէկ քանի թղթակիցներն ալ ճիշդ նորա պէս հասկցած են թղթակցի պարտաւորութիւնը։ Բայց պօլսեցոց ներելի է գոնէ եթէ չը գիտեն մաշուած լուրերէ զատ ուրիշ բան գրել, վասն զի չեն ունեցեր ուսումն առնելու դիւրին առիթներ։ Մենք աւելի խստապահանջ ենք Ռուսիայէն եկած թղթակցութեանց մասին, մանաւանդ երբ գրողը մի համալսարանական ծանօթ անձ է։ Պ. Շամշադրամ պարտաւորութիւն ունի օրինաւոր և լուրջ տեղեկութիւններ տալ մեզի ռուսահայոց վրայ։ Երբ այս ճանապարհը որոշէ ասկէ վերջը, պէտք է որ նախ համալսարանականաց վրայ մեր այժմեան ստացած գաղափարն ուղղէ, վասն զի քանի որ բաղդն ունենք իւր գրածները կարդալու, մեր այդ գաղափարն խիստ նպաստաւոր եղած չէ այդ դասակարգի անձանց մասին։

«Մեղուի» վերոյիշեալ համարին մէջ, նախ Գ. Արծրունիի վրայ կը յարձակի պ. Շամշադրամ, պատճառ բռնելով որ նա բացատրութիւն չէ տուած իւր մի հարցին պ. Դիւլօրիէի Ազգային ժողովին դիմելուն նկատմամբ։ Ի՞նչ կարեւորութիւն է այս որ կուտայ այդ պարոնը այսպիսի ամենաչնչին մի խնդրոյ, և ինչ հարցանդումներ է որ կուզէ առ «Մշակ»։ Ենթադրենք որ պ. Դիւլօրիէ չէ ըրած այսպիսի մի առաջարկութիւն Ազգային ժողովին։ Մինթէ այս բացասական հաստատութիւնը բաւական կը կարծէ այդ ժողովը արդարացնելու համար, քաւելու համար նորա ամեն մեղքերը։ Ազգային ժողովը այնքան մեղապարտ է ազգին առջև, այնքան ծանր և բազմաթիւ են իւր թերութիւնները, որ մէկ ֆրանսացի պարոնի նամակը նըկատողութեան չառնելով, չէ կարող իւր յանցանաց կշիռքն ամենաթեթև կերպով անդամ յաւելցնել։ Այսպիսի ժամանակ այս կերպ տաղտկալի միջադէպերով պարապուելը, բծախնդրութիւններ ընելը, միմիայն մեզ ցոյց կուտայ որ պ. Շամշադրամ Ազգային ժողովը այն մասին անմեղ հռչակել կուզէ և նորա արժանապատուութեան ինքնակոչ պաշտպանը հանդիսանալով, կը տքնի պարարկել նորա միւս ամենամեծ զեղծումները։

Փոխանակ այսպիսի իմաստակաբանութիւններով զբաղելու, արդեօք աւելի արդիւնաւոր չէր ըլլար եթէ պ. Շամշադրամ իւր ուշադրութիւնը դարձնէր «Journal d'Orient»-ի № 43-ի վրայ, որու մէջ խմբագիրը ստիպուած է սա խօսքերով դիմել Կ. Պոլսոյ ազգայիններուն։ «Իսկ գալով այն պատուարժան հայոց որք 4 ամիսէ ի վեր օրագիրը ձրի կընդունէին և որք յարմար չը դատեցին բաժանորդ գրուել, առ այժմ դադրեցուցինք նոցա մեր օրագիրն յուղարկելը։ Իրաւունք չէ որ մեք ուղեցանք Արքայէն աւելի արքայասէր ըլլալ։ Թող այս ցաւալի յայտարարութեան կարեւորութեանը վրայ մտածէր պ. Շամշադրամ համալսարանականը և հետևելով պ. Գր. Արծրունիի և պ. Գր. Նիկողոսեանի ջերմ հայրենասիրութեան օրինակին, աշխատէր ինքն ալ յորդորել, յանդիմանել, ամաչեցնել մեր անտարբեր և կարող ազգայինները, որ օժանդակեն այդ ամենաօգտակար լրագրին զարգացմանը, որպէս զի նա ալ օր մը ջլատուած՝ չքներ այսպիսի մի յայտարարութիւն և չարատաւորէր հայու անունը հասարակաց կարծեաց առջև։ Բայց չէ. «Մասիսի» թղթակիցն ի Ռուսաստան նախ կուզէ անպատճառ որ ժողովուրդը հասկընայ թէ պ. Դիւլօրիէ կ. Պոլիս նամակ գրեր է թէ չէ։

Պ. Շամշադրամ, թղթակից «Մասիսի» և այլն և այլն կը քննադատէ նաև պ. Նիկողոսեանի բռնած դիրքն իբրև սխալ, մինչդեռ կըսէ «Մշակի» բուն յայտնութիւններն են կողմնապահութիւն, նախանձ և ինտրիգաներ։ Չը գիտեմ որ աստիճան չնորհապարտ պէտք է ըլլայ պ. Նիկողոսեան որ «Մասիսի» թղթակիցը և այլն, խնայեր է զայն փոքր ինչ, անտես առնելով այն համերաշխութիւնը որ խմբագիրք ունեն միշտ իւրեանց աշխատակիցներու հետ։

Մեք որ քայլ առ քայլ հետևեցանք պ. Նիկողոսեանին այստեղ վարած պայքարին և տեսանք ընդհանրապէս «Մշակի» ընթացքը ազգային գործոց և գործիչներու նկատմամբ, կը զարմանանք թէ ինչ նպատակաւ այս կերպ կը մեկնեն նոցա վարմունքը և ուրիշ բանի չենք կրնար վերագրել այդ ընդդիմախօսին առած դիրքն այլ նորա որ նա լոկ անձնական խուլ և խորին դժկամակութիւն մը ունի նոցա դէմ։ Կը կասկածինք միանգամայն որ պ. Շամշադրամ յակամայս մի թթուեցուցիչ մթնոլորդի մէջ կապրի այս ժամուս։

Պ. Նիկողոսեան նախ յարձակեցաւ այստեղի գործող մարմիններու և գործիչներու վերացական և թռուցիկ ուղղութեան դէմ, փաստերն ի ձեռին և ապացոյցները մատնանիշ ընելով։ Միթէ չէն տեսներ թէ այդ օդային պոռոտախօսները մէկ քիչ զսպած են ինքզինքին այժմ, միթէ չեն իմացեր թէ նոյն իսկ Միացեալ ընկերութիւնք հիմայ բարեփոխեր են իւրեանց առաջուան խառնաշփոթ, անորոշ ուղղութիւնը։

Պ. Նիկողոսեան յարձակեցաւ և կը շարունակէ յարձակիլ կ. Պոլսոյ ազգային ժողովոյ ապիկար և տարտամ գործունէութեան վրայ։ Փաստեր պակասեցան իրեն զայդ հաստատելու համար և միթէ նորանոր դէպքեր չի գան հաստատելու նորա կարծեաց ճշմարտութիւնը ազգային վարչութեան մասին։ Նոյն դիրքն են բռնել «Մշակն» և իր աշխատակիցը՝ նաև կ. Պոլսոյ մամուլին նկատմամբ, որ ազգային ոգիէ և անկաչառակերութենէ զատ ամեն կատարելութիւն ունի։ Դպրոցներու նկատմամբ, որք ամօթ և նախատինք են մի մայրաքաղաքի համար։ Կանանց և արանց դաստիարակութեան եղանակին նկատմամբ, որ իմաստակներ և թեթևամիտներ կարտադրէ միայն։ Հայ էֆէնդիներու նկատմամբ, որոց ամեն մէկը աստիճան մը ստանալու համար կը ծախեն ազգ ու կրօնք, հայր և մայր։ Ո՞վ ելաւ բոլոր այս փաստերով ցոյց տրուած եղելութիւնները նոյնպէս փաստերով հերքել, և ինչու դուք ինքդ լռած էիք մինչև հիմայ, ով թղթակիցդ «Մասիս» լրագրոյ Ռուսաստանից։ Սոցա ամենուն իսկութիւնը, որք ազգին տունը կը քանդեն հաւաքաբար, հասարակութեան յառաջ վաղօրօք յայտ առնելը՝ կողմնապահութիւն է, նախանձ է, ինտրիգ է.

Եթէ պ. Շամշադրամ անպատճառ մի ծառայութիւն կուզէ մատուցանել ազգին, թող «Մասիսի» խմբագրութեան դասեր տայ Կովկասի աշխարհագրութեան վրայ, որպէս զի նա ալ Շամախին Երևանի մօտ չըսէ և Պաքուն ալ Ղարաբաղի։ Յորմէ հետէ բաւականապէս իւր ազգային պարտաւորութիւնը կատարած համարելով կրնայ քաշուիլ թղթակցական ասպարեզէն, իւր հետ տանելով բոլոր «Մասիսի» ընթերցողաց ի խորոց սրտի արձակած յօրանջումները։

Հ. Ֆ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. վարչական աքսորվածների գրութիւնը քննող մասնաժողովը կարելի համարեց շատերին ազատել և հոգալ աքսորվածների գրութեան բարւոքման մասին։ Պետական կօնտրոլը ընդունեց Գօրվիցի ընկերութեան 11,300,000 ր. մետալական պարաքը։ Մինիստրների մասնաժողովը կը քննէ այդ գործը նոյեմբերի 30-ին։ „Новости“ լրագիրը հաղորդում է լուր, թէ ոչնչանում են 3 կարգի արաօնութիւնները, առաջին կարգի ծառայութեան ժամանակամիջոցը ընդարձակվում $1^1/_2$ տարով, երկրորդը 3 տարով։ Այդ կարգադրութիւնը ժողովրդական լուսաւորութեան մինիստրի քննութեանը կը յանձնվի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի։ Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 12 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 91 ր. 50 կ., ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 220 ր. $75^1/_2$ կ., երկրորդ 214 ր. $75^1/_2$ կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր. 25 կ., երրորդ 90 ր. 25 կ., ոսկի 7 ր. $64^1/_2$ կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,81 պէնս, ռուսաց 100 ր. Փարիզի վրա 272 ֆր. $75^1/_2$ սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% **ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** մուրաբաներ, կոնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՁՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ, պլբօմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեոնկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կոնեակ և այլն։ Թէց մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴՐ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մագնեզիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԽԻՆԱՑԻ գինի ջերմի դէմ, ֆարբօլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկօգեաի համար, պարսկական փոշի։

97—100

ՌՈՒՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԱԿԻ դէմ ապահովում է շինութիւններ, ապրանքներ, պահեստներ, գործարաններ, գիւղատնտեսական շինութիւններ և մթերքներ։ Կովկասի համար գործակատար Պ. Ֆ. ԲԵԺԱՆԲԵԿ։ Գրասենեակը գտնվում է Երևանսկայա հրապարակի վրա քաղաքային տան մէջ առաւօտեան 10—2 ժամը և երեկոյեան 6—8 ամեն օր։ ՓՈԽ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ. Քութայիսում Հ. Պ. ԲԷԺԱՆԲԵԿ, Փոթի Ի. Գ. ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼԵԱՆ, Ախալցխա Պ. ՉԱԹԱԼԲԱՇԵՎ։ Նոյն տեղը ապահովուսեն ներքին 5% առաջին և երկրորդ փոխառութեան ՏՈՄՍԱԿՆԵՐԸ 55 կ. Ս. Պետերբուրգի Ի. Վ. ԻՒՆԿԵՐ բանկային տան յանձնարարութեամբ։ (Հ. շ.)

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Հայոց ուսումնարանաց ծրագրի միութեան հարցը վաղուց է, որ զբաղեցնում է մեր ուսումնարանների վարչութիւններին և ուսուցիչներին. բայց և այնպէս ցայսօր դեռ չէ կազմված և հոգեոր իշխանութիւնից չէ վաւերացրած մի այնպիսի ծրագիր, որին պարտաւորված լինէին հետևելու մեր ուսումնարանները։

Սրանից առաջ եկած բոլոր անյարմարութիւնները ի նկատի առնելով, Էջմիածնի Գէորգեան ճեմարանի ուսումնական խորհուրդը որոշեց քննութեան առնել ճեմարանի ծրագիրը և կազմել մի այնպիսին, որ ընդհանուր գծագրութեամբ յարմար լինէր մեր բոլոր ուսումնարաններին։

Որպէս զի այս ծանր գործը կատարեալ յաջողութիւն ունենայ, հարկաւոր է մեր ազգային ուսումնարանաց ուսումնական խորհուրդների և առհասարակ մեր ազգային լուսաւորութեան խնդրով զբաղվողների կարծիքները և ցանկութիւնները իմանալ։

Ուստի ի կողմանէ ճեմարանի խորհրդի պատիւ ունիմ դիմելու մեր բոլոր ուսումնարանաց ուսումնական խորհուրդներին և ազգային լուսաւորութեան նախանձախնդիր անձանց, խնդրելով մինչև առաջիկայ յունվարի 1-ը բարեհաճիլ ուղարկել յանուն ճեմարանի՝ կամ պատրաստի ծրագիրներ և կամ յայտնեն իւրեանց հայեացքները և պահանջները ազգային ուսումնարանից։

Քաջալերս եմ, որ ճեմարանիս խորհրդի առաջարկութիւնը սիրով կընդունվի և օգնութեամբ ազգային լուսաւորութեան ասպարիզում բոլոր գործող անձանց միջոց կը տանանք լրացնելու մեր բոլոր ուսումնարանաց փափագը։

Տեսուչ ճեմարանի Ա. Նահապետեան

1881 թ. 24 հոկտեմբերի

Ս. Էջմիածին 1—1

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—1 ժամը։

Ամենայն օր Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հետևեալ բժիշկները.

Հելդիշ 9—10 ժամը խիրուրգիական, սիֆիլիտիկական և կաշու հիւանդութիւնների։ Դանիելեկով և Լիսիցեվ 10—11 ժամը ներքին և ջղային հիւանդութիւնների։ Գավրօնսկի 11—12 ժամը մանկաբարձական և կանանց հիւանդութիւնների։ Կուդչինովիչ 12—1 ժամը սիֆիլիտիկական և ներքին հիւանդութիւնների։ Բացի այդ Գօրաչևիչ երկուշաբթի օրերը ներքին հիւանդութիւնների։ Մինկևիչ երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 խիրուրգիական հիւանդութիւնների։ Վերմիշեվ երեքշաբթի և ուրբաթ օրերը 10—11 ժամը ներքին հիւանդութիւնների։ Բէյլ երեքշաբթի և շաբաթ 10—11 ժամը աչքերի հիւանդութիւնների։ Բաբայեվ երեքշաբթի և շաբաթ 12—1 ժամը ջղային և ներքին հիւանդութիւնների։ Քիւչարեանց 1-ն չորեքշաբթի օրերը 11—12 ժամը խիրուրգիական, ականջի և բգային հիւանդութիւնների և շաբաթ օրերը սիֆիլիսի միզային-սեռական օրգանների հիւանդութիւնների։ Տարխանով երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ 11—12 ժամը ներքին հիւանդութիւնների։ Կինբժիշկ Օրբելի երկուշաբթի և հինգշաբթի 12—1 ժամը կանանց հիւանդութիւնների։

Օրբելիան ատամի ցաւ ունեցողներին ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով։ Ամեն օր բացի կիրակիից բժշկանոցի մէջ լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։ Բժշկանոցի գիրեկտոր։

Դ. Լիսիցեվ

Ելիսաւետեան փողոցում տուն № 59. ցանկանում են էլի ընդունել ՖՕՐՏՕՊԵԱՆԻ վրա սովորող աշակերտներ ամսական 6 ր. վճարով. շաբաթական երեք դաս։ Մուտքը հայաթիցն է։ 5—5

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՐԷՍՏՕՐԱՆԸ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և գեղեցիկ տեսք, ունի ընտիր ՃԱՇԵՐ և ԸՆԹՐԻՔՆԵՐ։ Նոյնպէս և լաւ ԽՄԻՋՔՆԵՐ։ Գները շատ էժան են

6—20

ՀԱՆՔԱՑԻՆ ԲԱՂՆԻՍ

ԻՎԱՆ ՄԻՆԷՑԻՋ ՄԻՐԶՕԵՎԻ ՈՐԴԿԵՐԱՆՑ (Նախկին Թագաւորական բաղնիս, Բանիայա փողոցի վրա, Իշխան Բէբութովի բաղնիսից վերև)։ Հինգշաբթի, հոկտեմբերի 22-ին բացվեցան կանանց և տղամարդկերանց հասարակական բաղնիսներ և առանձին համարներ։ Առանձին համարի գինը 80 կ. և 1 ր. ժամը, ընտանեկան համարը 1 ր. 50 կոպ.։ 3—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶՈՒՄ ներկայ 1881 թուականի նոյեմբերի 9-ին **կլինելու է ԱՃՈՒՐԴ**, օրէնքով որոշված կրկնաճուրդով երեք օրից յետոյ ծախելու համար միմեանց կից **ԵՐԵՔ ԱՆՇԱՐԺ ԿԱՅՔԵՐ**, որոնք գտնվում են Թիֆլիսի 2-դ բաժնում **ԿՕՆՍՈՒԼՍԿԱՅԱ ԵՒ ՆՕՎՕԲԷԲՈՒՏՕՎՍԿԱՅԱ** փողոցների վրա և որոնք պատկանում են Ստատսկի Սօվետնիկ իսայ Արսենիչ **ՏԷՐ-ՂՈՒԿԱՍՕՎԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ**. կոլեժսկի ասեսոր Դաւիդին, կոլեժսկի րէգիստրատոր **ԿՕՆՍՏԱՆՏԻՆԻՆ** և ազնուական **ԱՐՏԻՄԻԻ և ՍՕԼՕՄՕՆ** ՏԷՐ-ՂՈՒԿԱՍՕՎՆԵՐԻՆ և նրանց քոյր կոլեժսկի ասեսորի կին **ՏԵՐԵԶԱ ՄԱԶԻՐՕՎԻՆ**։

1) Երկու յարկանի տուն սարդափով, կառուցված է այրված աղիւսից, քարից, կրից և դաջից կրատիպ կտուրով. 140 քառակուսի սաժէն հողով։ Այդ տանից կարելի է դռներ բանալ Նօվօ-Բէբուտօվսկայա փողոցի վրա։

2) Երկյարկանի տուն սարդափով և սառնամանիքով, կառուցված նոյն նիւթերից նոյնպիսի կտուրով և 100 քառակուսի սաժէն հողով։ և 3) երեք յարկանի տուն նոյն նիւթից կառուցված նոյնպիսի կտուրով 482 քառակուսի սաժէն հողով։ Այդ տանից կարելի է դռներ բանալ Նօվօ-Բէբուտօվսկայա փողոցի վրա։ Ամբողջ պարտքը պրիկազին մինչև կրկնաճուրդի օրը, այսինքն նոյեմբերի 13-ը յիշեալ տների վրա հաշվում է 54,847 ր. 95 կ.։

Վերոյիշեալ կալուածները դնել ցանկացողները կարող են տեսնել թէ շինութեան նախագիծը և թէ գնահատական ցուցակը պրիկազի մէջ. նոյնպէս և պարտքը փոխանցնելու պայմանները։ 3—3

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Կամսար ՏԷՐ-Դաւթեանցի „РУССКОЕ СЛОВО“—Նոր դասագիրք ռուսերէն լեզուի, հայ դպրոցների համար, **ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**։ Ընդունված է Վրաստանի և Իմերէթի և Երևանայ թեմերի հայոց բոլոր ուսումնարաններում, նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից շատերում։ Վաճառվում է Թիֆլիսում բացառապէս „Կենտրօնական“ գրավաճառանոցում։ Գինն է 45 կոպէկ։ Գումարով գնողներին քանակութեան համեմատ զէջումն կը լինի։ Ցանկացողները պէտք է ուղղակի դիմեն „Կենդրօնական“ գրավաճառանոցին. Тифлисъ. «Центральная книжная торговля»

2—7

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյլաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ**։

76—100

ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ, ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ դասեր ընտանիքներում։ ՀԱՐՑՆԵԼ **„ՄՇԱԿԻ“** խմբագրութեան մէջ։

ՎԻԷՆՆԱՑԻ ՄԵԲԻԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

96—150

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Դասագրքեր՝

1. Աղայեանց՝ Ուսումն մայրենի լեզուի, ա. տ. չորրորդ տիպ.	20	կ.
2. Տէր-Դաւթեան՝ Русское Слово, հինգերորդ տիպ.	45	—
3. Կոստանեանց՝ Ծաղկաքաղ շրջան Ա. (գրաբար)	25	—
4. — — — շրջան Բ. (նոյնպէս)	60	—
5. — — — շրջան Գ. (նոյնպէս)	40	—
6. — — — գրաբառի հոլովումն	15	—
7. — — — գրաբառի խոնարհումն	25	—
8. Տէր-Յակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60	—

Ընթերցանութեան գրքեր՝

1. Աղայեանց՝ Անահիտ, հին գրոյց.	50	—
2. Արս. ք. Բագրատունի՝ տասն պատգամք	25	—
3. Տէր-Միքայէլեան՝ Թղուկ, թարգ. Դոդէից	50	—
4. Լալայեան՝ Ահմէդի տօպրակը	10	—

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

Մամուլի տակ են՝ Մանդինեանցի „Նահապետական“ և „Դիւցազնական“ աշխարհները և Տէր-Ղևոնդեանի՝ „Մայրենի լեզու“ երկրորդ տարի։

Շուտով մամուլի տակ կը մտնի՝ Սրբազան պատմութիւն հին կտակարանի Հայոցդու։

Անգլիական երկաթեայ պատենտած ԱՐՕՐՆԵՐ, լեմէխների պաշարով Բանսօմի ֆաբրիկայից, ծախվում են գործարանական գներով **ՊԻՎՕՎԱՐՕՎԻ և ԳՕԼԴԼԻՒՍՏԻ** կանտորայում Թիֆլիսում, Դվորցօվայի փողոցի վրա Արծրունու գալերէում № 188

13—20 (2)

Дозволено цензурою, Тифлисъ 3 Ноября 1881 года. Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.